ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 24.01.2018Թ. ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԴԻԼԻՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի՝ Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհուրդը 24.01.2018թ. կայացած նիստում քննարկեց Դիլիջանի զարգացման ծրագրի նախագիծը:

Կարևորելով վերջին տարիներին Դիլիջան համայնքում կատարված ներդրումների կարևորությունը և դրանց շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ **«Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» Բարեգործական հիմնադրամ (IDeA)** (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից նախաձեռնվել է Դիլիջանի զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման աշխատանքները:

Համաձայն ներկայացված Ծրագրի Հիմնադրամը մեկնարկում է քաղաքի Գետափնյա հատվածում երկարաժամկետ 4 ներդրումային նախագծեր, որոնց նպատակն է՝

1. Համայնքի բնակիչների և այցելուների հանգստի և ժամանցի կազմակերպման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:
2. Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:
3. Քաղաքաշինական նոր տեխնոլոգիաների և մոտեցումների խրախուսումը և կիրառումը:
4. Բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և նախագծերի իրականացման արդյունքում ՓՄՁ ոլորտի զարգացումը
5. Միջազգային չափանիշներին համապատասխան առողջարանային կենտրոնի հիմնում, բժշկական զբոսաշրջության խթանում:

Ծրագիրը ներառում է չորս բաղադրիչ՝

1. «Զաում Դիլիջան» Կենտրոնի հիմնում,

2. Քաղաքային լճի հարակից տարածքի բարեկարգում,

3. Քաղաքային զբոսայգու բարեկարգում,

4. Քաղաքային մարզադաշտի բարեկարգում:

Ներդրումային Ծրագրի իրականացման տևողությունը կազմում է 60 ամիս, իսկ ներդրումների ծավալը կազմում է առնվազն 15,682,750,000 (տասնհինգ միլիարդ վեց հարյուր ութսուներկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Ներդրումային ծրագրի իրականացման ազդեցությունը Դիլիջան համայնքի վրա՝

– Ներդրումային գրավչության բարձրացում՝ այլ ներդրողների համար տարածաշրջանում ներդրումների իրականացման բարենպաստ միջավայր:

– Զբոսաշրջային ենթակառուցվածքների կատարելագործում և տուրիստական հոսքերի ավելացում:

– ՓՄՁ ոլորտի զարգացում՝ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ծավալի հավելյալ աճ, սպառման ծավալների մեծացում:

– Տարածաշրջանում գործազրկության մակարդակի նվազում և աղքատության մակարդակի կրճատում:

– Համայնքից աշխատուժի արտահոսքի մակարդակի կրճատում:

– Քաղաքաշինության բնագավառում առաջադեմ տեխնոլոգիաների, կառուցապատման կանոնների և չափանիշների ներդրում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Դիլիջան համայնքում նախատեսվող ներդրումների իրականացման կարևորությունը, ինչպես նաև դրա սոցիալ տնտեսական ազդեցությունը համայնքի վրա՝ Խորհուրդը դրական կարծիք է հայտնում Դիլիջանի զարգացման ծրագրի (առաջին փուլ) նախագծի վերաբերյալ:

Խորհրդի նախագահ՝ Արթուր Դավթյան

Խորհրդի քարտուղար՝ Լամարա Մանթաշյան